ՀՀ Արարատի Մարզի
«Տափերականի ԲԱ»
Փակ Բաժնետիրական
Ընկերություն

Respublic of Armenia
Medicial Dispensari
Taperakan
Closed joint-stock
company

**Հեռախոս՝ 6 - 05- 48** **ՀՎՀՀ 04104972** **«25» դեկտեմբերի 2015թ.**

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/15» ծածկագրով շրջանակային
համաձայնագրերի միջոցով գնում կատարելու
ընթացակարգի հնարավոր մասնակիցների
ղեկավարներին

## Հարգելի մասնակից

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/15» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «Տափերականի ԲԱ» ՓԲԸ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերելու Գնումների աջակցման կենտրոնի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված ապրանքները:

<u>Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիրն է հանդիսանում</u> ՏԲԱ-ՇՀԱՊՁԲ-11/15-2015/2

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել «Տափերականի ԲԱ» ՓԲԸ, ՀՀ Արարատի մարզ, գ.Տափերական, Շահումյանի 1 հասցեով, ընդունարան, մինչև 2015թ հունվարի 15-ը, ժամը 12:30-ը: Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար Գևորգ Ամիրջանյանը: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում ըստ ստացման հերթականության, ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:

Հայտերը կբացվեն «Տափերականի ԲԱ» ՓԲԸ-ի շենքում, ՀՀ Արարատի մարզ, գ.Տափերական, Շահումյանի 1 հասցեով, ընդունարանում, 2015թ. հունվարի 15-ին, ժամը 12:30-ին:

Գնման առարկա է հանդիսանում «Տափերականի ԲԱ» ՓԲԸ-ի կարիքների համար «Քիմիական նյութերի» ձեռքբերումը:

«Տափերականի ԲԱ» ՓԲԸ-ի կարիքների համար «Քիմիական նյութերի» մատակարարման (մատուցման, կատարման) (որոնք կազմված են 12 չափաբաժիններից). տեխնիկական բնութագիրը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանները ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներակայացված է հրավերի (ծանուցման) N1 հավելվածում: Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված.

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (հավելված N5). ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային հասցեն.

բ. գնային առաջարկ (Հավելված N 5.1): Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

հայտն անհրաժեշտ է ներկայացնել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ -11/15» ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

**«Տափերականի ԲԱ» ՓԲԸ-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝** taperakanak@mail.ru

*Հարգանքով*

Տնօրեն՝ Ա. Չոբանյան

Կատարող՝ Գնումների համակարգող Գևորգ Ամիրջանյան, հեռ. 091277156